5.qxd 14/03/2026 16:49 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԱՐԱՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 13 մարտի 2026թ. թիվ 5 (633)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՜ կանայք եւ աղջիկներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ գարնան ամենագեղեցիկ եւ խորհրդանշական տոներից մեկի՝ Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Այս օրը եւս մեկ առիթ է՝ արժեւորելու կնոջ անփոխարինելի դերը մեր կյանքում: Կինը կյանքի շարունակության խորհրդանիշն է, ընտանիքի ջերմության եւ հոգատարության աղբյուրը: Ձեր սիրով, համբերությամբ, իմաստությամբ ու նվիրումով ձեւավորվում են ամուր ընտանիքներ, դաստիարակվում են արժանապատիվ սերունդներ եւ պահպանվում են մեր ազգային լավագույն ավանդույթները:

Հայ կնոջ կերպարը մշտապես եղել է ուժի, արժանապատվության եւ ստեղծարարության օրինակ:

Այսօր եւս դուք ակտիվորեն ներգրավված եք հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ կրթության, առողջապահության, մշակույթի, տնտեսության եւ կառավարման մեջ՝ ձեր աշխատանքով ու նախաձեռնություններով նպաստելով մեր պետության զարգացմանն ու առաջընթացին:

Մաղթում եմ ձեզ ամուր առողջություն, անսահման երջանկություն, ընտանեկան բարօրություն եւ նոր հաջողություններ կյանքի բոլոր ոլորտներում: Թող ձեր յուրաքանչյուր օրը լցված լինի սիրով, գնահատանքով եւ գարնանային պայծառ տրամադրությամբ: Շնորհավոր Մարտի 8:

Ձերմ բարեմաղթանքներով՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ ԿՐԿԻՆ ԲՈՑԵՐԻ ՄԵՋ Է

Արդեն բոլորում է երկրորդ շաբաթը, ինչ բորբոքվել է իրանաամերիկյան եւ իրանաիսրայելական պատերազմը, որի բոցերը սպառնում են տարածվել տարածաշրջանով, անգամ՝ աշխարհով մեկ: Ընթանում է շատ ավելի դաժան ու գիշատիչ պատերազմ, քան մարդկային միտքը կարող է պատկերացնել: Առայժմ այն ընթանում է հրթիռակոծությունների տեսքով, որի արդյունքում ավերվում են ռազմական օբյեկտները, որոշ դեպքերում՝ նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքներն ու բնակավայրերը: Առավել ողբերգական իրադարձություն գրանցվեց Իրանի դպրոցներից մեկում, որտեղ հրթիռակոծության զոհ դարձան ավելի քան 160 անմեղ երեխա, հարյուրավոր մարդիկ էլ վիրավորվեցին:

Իրանը թիրախավորում է ոչ միայն ամերիկյան նավերն ու օդանավերը, ռազմաբազաները, այլ նաեւ իրեն հարեւան այն երկրների տարածքները, որտեղ տեղակայված են ամերիկյան ռազմաբազաները կամ ստորաբաժանումները:

Ցամաքային գործողություններ միմյանց դեմ առայժմ չեն սկսվել, սակայն արդեն զինվորական կամ քաղաքացիական անձանց շրջանում զոհերի թիվը հաշվվում է հազարներով:

Ընդ որում, իսրայելաամերիկյան հրթիռակոծության հետեւանքով գրեթե գլխատվել է իրանի ռազմաքաղաքական վերնախավը:

Ռուս-ուկրաինական պատերազմի ֆոնին Մերձավորարեւելյան տարածաշրջանը ճարակած այս պատերազմը հերթական ծանրագույն աղետն է մարդկության գլխին, որի չեզոքացման համար առայժմ ծանրակշիռ նախադրյալներ չեն նկատվում, քանի որ անհաշտ կռիվը ծավալվում է գերիշխանության հաստատման, ճանապարհների ու հանքերի տիրապետման, հակամարտ ուժերի նոր դիրքավորման, նոր աշխարհակարգի հաստատման շուրջ, որտեղ ավելորդ է խոսել փոխզիջման, փոխադարձ հարգանքի, մարդասիրության դրսեւորման, հաշտության ու խաղաղության կնքման մասին:

Ավելորդ չէ հիշեցնել, որ Մերձավորարեւելյան տարածաշրջանը ազգային հակասությունների անվերջանալի շղթա է թուրքերի, պարսիկների, հրեաների, արաբների, հույների, քրդերի միջեւ, ուր յուրաքանչյուրը ձգտում է հաստատվել ու խոսել ուժի կամ տիրապետողի դիրքերից, իսկ ժամանակակից աշխարհի զսպող կառույցներն առայժմ անզոր են կամ չեն ցանկանում՝ կանխել մերօրյա պատերազմները, որոնք ցանկացած պահի կարող են հանգեցնել մարդկության անդառնալի կործանմանը:

Խաղաղություն ամենեցուն, մա՛հ պատերազմ սերմանող բոլոր մոլագար դեւերին:

ԻՆՉ Է ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԶՈԼԱՔԱՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՄՏԱՆԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԽԱՉՔԱՐԻ ԹԻԿՈՒՆՔԻՆ

Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի կենտրոնական մասում է գտնվում Հայաստանի ամենաբարձր խաչքարը, որի բարձրությունը գետնից կազմում է մոտ չորս մետր: Այն նաեւ սնկաձեւ է, այդիսկ պատճառով էլ ներքեւի մասում ունի 1 մետր 30 սանտիմետր լայնություն, սակայն վերեւի մասում արդեն ավելանում է մոտ 10 սանտիմետրով:

Խաչքարը կերտվել է 13-րդ դարում: Թեեւ նրա կերտման ստույգ թվականն արձանագրված չէ, սակայն մասնագետներն այդպես են կարծում՝ դատելով խաչքարի կերտման ոճական առանձնահատկություններից:

Ամեն դեպքում, հայ ականավոր հնագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանն իր «Դիվան հայ վիմագրության» աշխատության մեջ Զոլաքար գյուղի բաժնում այդպես էլ առանձնահատուկ նշում է, որ չափերով բացառիկ, գեղաքանդակ այս խաչքարը վիմագրություն չունի:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՉԱՐԵՆՑԸ

Հայ ականավոր բանաստեղծ Եղիշե Չարենցը դարձավ 129 տարեկան: Սակայն Չարենցի տարիքը հնարավոր չէ չափել ժամանակի հետ ու տարածության մեջ, քանզի նրա թողած գրական հսկայական ժառանգությունը տիեզերական անվերջանալիություն է, անջնջելի հավերժություն, մշտահորդ գետ, ոգու փոթորիկ, հույզերի հեղեղ, սիրո դրախտային պարտեզ, ազգային իղձերի որոնում, հոգու քնարական հանգստություն, հայրենի աղբյուրների պես զուլալ ու կարկաչուն լեզու:

Չարենցի գիրը դարերով էլ որ պեղես, մեկ է, չես հասնելու վերջին, չես սպառելու նրա հոգու տվայտանքները, գաղափարի խորությունը, ապագայի տեսլականը: Նա մարմին չէ այլեւս շատ վաղուց, անգամ անգերեզման մարդ է, սակայն ամեն գիշերվա մեջ բոցավառվող աստղ է ու ամեն առավոտվա հետ ծագող արեւ:

Ու ոչ մի թշնամական գրոհ, քաղաքական ոչ մի արհավիրք չեն կարող մոռացնել տալ հայկականության այն տարածությունը, որը գծեց Եղիշե Չարենցն իր հզոր գրով, հայրենասիրությամբ, անձնազոհությամբ, համազգային պատգամներով:

Ջերմեռանդ պաշտամունքով ու խորին ակնածանքով օրհնում եմ ծնունդդ, Հայոց դիցական ակունքներից ծնունդ առած ու միշտ չխամրող փառքով ապրող Եղիշե Չարենց:

Խոսրով Խլղաթյան

ԴՈՖԻՆԸ ՆԱԻՐԱԿԱՆ
/Աղասի Խանջյանին/

(Յոթ սոնետ)

ՍՈՆԵՏ ԱՌԱՋԻՆ

«Դոֆինը Նաիրական»

Նա պառկած էր նախկին սեղանատան միգում,
Հին սեղանի վրա, երկայնքն ի վար դրած,
Էր դագաղում դեղին,– եւ ճակատին նրա
Քստմնելի՝ հանգչում էր ծաղիկների մի կույտ:
Մագաղաթի նման ողորկ, ապակեգույն՝
Կարծես մաքրել էր մի անագորույն կրակ՝
Պսպղում էր դեմքի ալեբա՜ստրը բարակ, –
Եվ ո՜չ մի խոհ դեմքին, իբրեւ պատգամ Հոգու:
Ո՜չ մի խորհուրդ, ավա՛ղ, կամ մտորում չնչին.
Բիլ ապակուց ձուլած բարակ մատնե՜րն անգամ՝
Անկամ՝ կառչե՛լ էին մոռացության տենչին:
Մի՞թե ,դոֆինն էր այդ, – վերջին նաիրական,
Արքայա՜զնը, ննջած դափնիների ներքո,
Արնաշաղա՜խ քաղած իր սեփական ձեռքով:

ՍՈՆԵՏ ԵՐԿՐՈՐԴ

«Դոֆինը իրական»

Այս գաղթական կանանց ընտանեկան սուգով
Եվ շիվանով միայն շրջապատած,
Փայտյա դագա՜ղն ու դի՜ն արյունոտած –
Մի՞թե, օ՛, Աղասի՜, դիա՜կն է քո:
Դո՞ւ ես արդյոք պառկած այդքան անհույզ դեմքով
Հանցապարտի, գողի դագաղ մտած,
Երբ ժողովուրդն անգամ աչքերն իր թաց,
Վարանքո՛վ է սրբում բաց դագաղի դեմ քո...

/շարունակությունը՝ էջ 8-ում/

5.qxd 14/03/2026 16:49 Page 2

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄՈՏ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՀԵՏՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՌԱՋԻԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի մոտ քննարկվել են «Հայաստանի արահետներ» ծրագրի իրականացման հետ կապված առաջիկա անելիքները:

«Հայաստանի արահետներ» ծրագրի իրականացման հետ կապված հարցերի քննարկման նպատակով Գեղարքունիքի մարզպետն ընդունել է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի տնօրեն Գոհար Գրիգորյանին,«ՍԵՊՖԱ ՋԱՐԳԱՑՈՒՄ» հիմնադրամի «Հայաստանի արահետներ» ծրագրի պատասխանատու Նազելի Մաշուրյանին եւ ծրագրի երիտասարդների հետ աշխատանքների համակարգող Անուշ Ստեփանյանին: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են «Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակում Գեղարքունիքի մարզում համատեղ իրականացված աշխատանքներին ու առաջիկայում նախատեսվող քայլերին՝ Գեղարքունիք -Ֆրանսիայի Իզերի մարզ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում, ֆրանսիական «Աֆրատ» տուրիստական կազմակերպության հետ համագործակցությամբ:

-Առաջիկայում նախատեսվում է կառուցել ռեսուրս կենտրոններ, որոնք ձեւավորվում են «Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակում եւ միտված են էկոտուրիստական գոտիների ստեղծմանը՝ խթանելով բնության պահպանությունը, կայուն զբոսաշրջության զարգացումն ու համայնքների ակտիվ ներգրավվածությունը,- ներկայացրին Գեղարքունիքի մազրպետի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՌԴ ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն ընդունել է ՌԴ Նովոռոսիյսկ քաղաքի պաշտոնական պատվիրակությանը՝ քաղաքապետ Անդրեյ Կրավչենկոյի գլխավորությամբ:

Պաշտոնական այցը կազմակերպվել էր Գավառ-Նովոռոսիյսկ եղբայր քաղաքների համագործակցության շրջանակներում:

Ռուսական պատվիրակության կազմում էին Նովոռոսիյսկ քաղաքի հայկական ազգային մշակութային «Լույս» ՀԿ նախագահ Վլադիմիր Մխիթարյանը, Նովոռոսիյսկի քաղաքապետարանի եւ հայկական համայնքի կրթամշակութային, երիտասարդական, հասարակայնության հետ կապերի հարցերով պաշտոնյաներ ու պատասխանատուներ:

Գավառի համայնքապետարանում տեղի է ունեցել պատվիրակության պաշտոնական ընդունելություն, հուշանվերների հանձնում, ներկայացվել է Գավառ համայնքի նկարագիրը, Գավառի համայնքապետարանի ղեկավար կազմի եւ համապատասխան ոլորտային պատասխանատուների հետ քննարկվել են տուրիզմի, սոցիալական, կրթամշակութային, երիտասարդության, հասարակայնության հետ կապերի եւ այլ ոլորտներում հնարավոր գործակցության հեռանկարները:

Գուրգեն Մարտիրոսյանն ու Անդրեյ Կրավչենկոն ծաղիկներ են խոնարհել Սամվել Քոչարյանցի պուրակում տեղադրված Լազար Մարկոսի Սերեբրյակովի հուշատախտակին եւ Սամվել Քոչարյանցի կիսանդրուն:

Այնուհետ այց է կատարվել Գավառի մշակույթի տուն, Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն, Գավառի ավագ դպրոց, Արծվաքարում գործող Միաքայելյանների պանրի արտադրամաս, Գանձակ բնակավայրում գործող ,Ռուսական կենտրոնե եւ Գավառի գեղարվեստի դպրոց:

Նովոռոսիյսկի պատվիրակությունը Գավառից հեռացել է գեղեցիկ տպավորություններով եւ հետագա համագործակցությունների խորոցման ակնկալիքով:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԵՎ ԽՐԱԽՈՒՄԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԳԻ ԸՆԿԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, համայնքապետը հյուրընկալել է բազկամարտիկ Արման Մրտեյանին եւ բռնցքամարտիկ Սիմոն Սիմոնյանին, ովքեր ոչ միայն բազմիցս աչքի են ընկել հանրապետական ու միջազգային մրցաշարերում, այլ նաեւ վերջերս ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի կողմից արժանացել են ՀՀ սպորտի վաստակավոր վարպետի պատվաբեր կոչմանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ բռնցքամարտիկ Սիմոն Սիմոնյանի մարզիչներ Գեւորգ եւ Գագիկ Սարգսյանները, Մարտունու մարզադպրոցի տնօրեն Սամվել Մոսեյանը:

Համայնքի ղեկավարը շնորհավորել է մարզիկներին ու նրանց մարզիչներին, հետաքրքրվել նրանց առաջիկա նպատակներով ու անելիքներով:

-Արման Մրտեյանը բազկամարտի Եվրոպայի առաջնությունների 7-ակի ոսկե մեդալակիր է, միջազգային մրցաշարերի բազմակի մրցանակակիր: Արմանը ծնունդով Զոլաքարից է, ու թեեւ նա այժմ բնակվում ու աշխատում է մայրաքաղաքում, շարունակում է մնալ Մարտունի համայնքի պարծանքը: Սիմոն Սիմոնյանը բռնցքամարտի 2024 թվականի Հայաստանի եւ Եվրոպայի առաջնությունների հաղթող է, բնակվում է հայրենի Ծովինարում եւ ակտիվորեն պատրաստվում է հաջորդ տարի կայանալիք մեծահասակների առաջնությանը: Հայաստանի անկախացումից ի վեր Սիմոնը Մարտունու մարզադպրոցի առաջին մարզիկն է, ով ստացել է սպորտի վաստակավոր վարպետի կոչում,-ներկայացրել է մարզադպրոցի տնօրեն Սամվել Մոսեյանը:

Հովհաննես Հովեյանը բարձր է գնահատել մարզիկների ձեռքբերումները, նշելով, որ նման նվաճումները տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք են: Նա առանձնահատուկ շնորհակալություն է հայտնել մարզիչներին՝ արգասաբեր ու արդյունավետ գործունեության համար:

Հանդիպման ավարտին համայնքի ղեկավարը մարզիկներին հանձնել է շնորհակալագրեր եւ մաղթել նորանոր հաղթանակներ:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԹԱԵՔՎՈՆԴՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում անցկացվել են ուսումնամարզական հավաք եւ GK թաեքվոնդոյի ակումբային առաջնություն, որին մասնակցել են նաեւ Սեւանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի մարզիկները:

Մարզիչ Դավիթ Թորոսյանի սաներն իրենց լավագույնս են դրսեւորել ինչպես հավաքների, այնպես էլ՝ առաջնության ընթացքում:

Սեւանցի մարզիկների բարձր պատրաստվածության, մարզային եւ կամային որակների շնորհիվ գրանցվել են տպավորիչ արդյունքներ:

Ոսկե մեդալակիր է դարձել Ռաֆիկ Դավթյանը, արծաթե մեդալակիր՝ Էմին Գալստյանը, երրորդ պատվավոր հորիզոնականում կանգնել են Էրիկ Գալստյանը, Ներսես Ղազարյանը եւ Դանիել Նալբանդյանը:

-Մեր թիմի մարզիչն ու մարզիկները հերթական անգամ բարձր պահեցին Հայաստանի եւ Սեւանի մարզական պատիվը, իսկ առջեւում նոր մրցելույթներ են, որոնց սպասում ենք նոր հաղթանակների ակնկալիքով,- ներկայացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է 62 ԾՆՈՒՆԴ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում գրանցվել է 62 ծնունդ: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 62 նորածիններից 32-ը աղջիկներ են, 30-ը՝ տղաներ: 22 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 21 երեխա՝ Սեւանի, 11 երեխա՝ Գավառի, 6 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 2 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

Նույն աղբյուրի համաձայն՝ 2025 թվականի փետրվար ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 86 երեխա:

5.qxd 14/03/2026 16:49 Page 3

ԻՆՉ Է ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԶՈԼԱԲԱՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԽԱՉԲԱՐԻ ԹԻԿՈՒՆՔԻՆ



/սկիզբը՝ էջ 1-ում/

Սակայն ամենասովորական աչքով էլ խաչքարի թիկունքին ու ճակատի ներքին հատվածում նկատելի է արձանագրությունը, ընդ որում, գծված 12 տողերի վրա, որին Բարխուդարյանն ընդհանրապես չի անդրադարձել: Ամենայն հավանականությամբ, ոչ թե հնագետը չի նկատել արձանագրությունը, այլ տեքստին կարեւորություն չի տվել՝ ելնելով խաչքարի կերտման ու արձանագրության կազմման դարաշրջանների խիստ անհամատեղելիությունից:

Բանն այն է, որ Հայաստանի ամենաբարձր խաչքարը կերտվել է 1200-ական թվականներին, Զաքարյան տիրապետության շրջանում, իսկ ահա նրա թիկունքին եղած գիրը գրվել է 1880 թվականին, ավելի քան 6 դար հեռավորությամբ: Գրի բովանդակությանն անդրադարձել է պատմական գիտությունների թեկնածու, վիմագրագետ Արսեն Հարությունյանն իր հեղինակած «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ» աշխատության մեջ:

Ահա թե ինչ է բովանդակում այդ արձանագրությունը. «ԱՐԴԷՆ ԳՐԱԾԻՑՍ ԱՌԱՋ ԿԱՐ ԽԱՉՍ. / ԱՄԻ ՀԱՉԱՐ ՈՒԹ ՀԱՐԻՒՐ ՈՒԹՍ/ՈՒՆԻՆ / ԵՐԿԻՐՍ ԵՂԵՎ ՍԱՍՏԻԿ ԹԱՆԿՈՒ/ԹԻՒՆ, / ԵՕԹ ՄԱՆԷԹ ԾԱԽՎԵՑ ՄԻ ՓՈՒԴ ՑՈ/ՐԵՆ, / ԳԱՐՈՒ ԼԻՏՐ ՄԱՆԷԹ ԱՐԺՕՂՈՒԹԻՒՆ, / ԽՈՏԻ, ԴԱՐՄԱՆԻ ՓՈՒԴ՝ ՉՈՐՍ ՄԱՆԷԹ, / ՀԱՉԻՒ ԿԱՐԱՑԱՆՔ ԱՌՆԵԼ, ԹԷՊԷ/Տ / ԵՂԻՑԻ ԳԻՐՍ ԸՆԹԵՐՉՕՂԻՆ ՁՂԷՏ, / Ի ԼԻ ԺԱՄՈՒՄ ԵՂԻՑԻ ԱՆԴԷՏ, / ՉԸՊԱԿԱՍԵՑՆԷ ՀԱՑ ԱՄԷՆ ԴԷՊ, / ՏԷՐ ՎԱՀԱՆ ՍԱՐԳԻՍՕՎ ԳՐԱ/ԳԷՏ / ՄԱԿԱՆՈՒԱՆԲ / ԲԱՐԷՊԱՇՏ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱԳԱՒՈՐ / ԱԶԱՏԵՑ ՍՈՎԻՑ ԱՇԽԱՐՀՍ ԲՈԼՈՐ»:

«Նախ ուշագրավ է մասամբ չափածո վիմագրի առաջին տողը, որով գրիչը, որը, ըստ ամենայնի, Գրագետ մականվամբ Վահան Սարգիսովն է, ընթերցողին ծանուցում է խաչքար-կոթողի եւ իր փորագրած վիմագրի տարաժամանակյա լինելու մասին, այն է՝ վիմագիրը կազմելուց առաջ խաչը (խաչքարը) արդեն կար: Միաժամանակ գրիչը ցանկանում է, որ նեղ օրերին իր գիրն ընթերցողին «դետ», այսինքն՝ դիտելի, իսկ առատ ժամանակներում «անդետ» լինի (դիտող, կարդացող չունեցող), եւ հացը երբեք չպակասի: Բացի ցորենի, հետեւաբար նաեւ հացի թանկության մասին հիշատակությունից՝ վիմագրում նշվում է նաեւ գարու, խոտի ու դարմանի (հարդի) գնաճի մասին, եւ եթե ցորենի փութն այստեղ տասի փոխարեն յոթ, ապա գարու լիտրը՝ մեկ, իսկ խոտի ու դարմանի փութը չորս մանեթ էր: Սա վավերացվում է նաեւ «Մշակ»-ի համաժամանակյա մի հաղորդագրությամբ, ըստ որի՝ Նոր Բայազետում սաստիկ թանկացումներ են եղել. «….ալիւրի պուդը, որ առաջ ծախվում էր 50 կօպէկով, այժմ արժէ 2 ր. 60 կ. եւ բարձր»: Այս հիշատակությունը հստակ պարզում է գնաճի չափը, այն է՝ մեկ փութը նախկին հիսուն կոպեկի փոխարեն դարձել էր յոթ մանեթ: Վիմագիրն ամբողջացվում է ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր (1855-1881) կողմից երկրի՝ սովից ազատման մասին հիշատակմամբ: Այն, որ հացի սղության ու թանկության պատճառը նաեւ եղանակային անոմալ երեւույթներն էին, վերահաստատում են դարձյալ մամուլի հաղորդագրությունները: Այսպես՝ 1882 թ. ապրիլի 2-ին Նոր Բայազետից հայտնում էին, որ տակավին ցուրտ է, ձյունն ու բքաբեր քամիները՝ անպակաս, Սեւանա լիճը դեռ սառած է, ձկնորսությունը՝ խափանված, իսկ «երկրագործները դեռ ոչինչ գործ չեն սկսել, ո՞չ ցանել, ո՞չ էլ հերկել են: Բայց դարձեալ նրանք յուսով ապրում են, վասն զի սոցա ցանք անելու ժամանակը կարող է լինել մինչեւ մայիսի սկիզբները»: Կամ՝ 1883 թ. սեպտեմբերին դարձյալ Նոր Բայազետից գրում էին, որ «եղանակը շատ վատ է այստեղ. ամեն օր շարունակ բաւական անձրեւ է թափվում եւ խեղճ հողագործների ցորեն եւ գարի կալսելը այս պատճառով յետաձգվում է օրից օր»: Իսկ 1895 թ. հունվարի 18-ին Նոր Բայազետից գրում էին, որ «մինչեւ այժմ այստեղ ձիւն չէ եկել եւ շատ չոր եղանակ է անում, որը շատ վնաս է աշնանացան արտերին: Բացի դրանից, ձիւն չը գալու պատճառով ամառը սարերում ջուր չի լինի անասունների խմելու համար, քանի որ մեր սարերում, ջուր չը լինելու պատճառով անասունները ջուր են խմում հալվող ձիւնից գոյացած լճակներում. եթէ այսպէս շարունակվի, թէ արտերի բոյսը եւ թէ արտերը վատ կը լինեն»: 1916 թ. հունվարի 9-ի նամակում նշվում է դարձյալ Նոր Բայազետում գրանցված տարօրինակ եղանակային պայմանների մասին»,-գրում է Արսեն Հարությունյանը:

Հայաստանի ամենաբարձր խաչքարը, որը կրում է Զոլախաչ կամ Զորախաչ անունը, թեեւ գտնվում է փոքր գերեզմանոցի տարածքում, բայց կարող էր նաեւ կերտված լինել ոչ թե գերեզմանաքարի, այլ ավելի շատ Պահապան խաչի զորության նպատակով:

Ինչ խոսք, անճաշակ, կիսագրագետ արձանագրությունը մի տեսակ ստվեր է գցում խաչքարի վեհության ու նշանակության վրա, սակայն եղածն էլ մի պատմության փաստագրում է, 1877-1878 թվականներին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմական դժվարին ժամանակաշրջանի պատմության, որի միջով անցել են մեր նախնիները եւ իրենց տրտունջն ու բողոքն արտահայտել շատ ավելի հեռավոր դարում կերտված հրաշակոթողին՝ այն պահ տալով հետագա ժամանակներին:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԱՄՅԱԿԸ

Գեղարքունիքի մարզի Քավառ քաղաքի Լ. Քալանթարի անվան պետական թատրոնում 2026 թվականի մարտի ութին կայացած ներկայացմամբ մեկնարկել է թատերական երկամսյակը, որը ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ եւ ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի աջակցությամբ արդեն կայանում է չորրորդ տարին անընդմեջ: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, թատերական երկամսյակի շրջանակներում, նախորդ տարիների պես, մարզ կայցելեն եւ ներկայացումներով հանդես կգան մայրաքաղաքի եւ հանրապետության տարբեր մարզերի լավագույն թատերական խմբերը:

Այս տարի թատերական երկամսյակի բացումն իրականացրել է Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից ցերեկույթին հրավիրված էին Արցախյան բոլոր պատերազմներում զոհված եւ վիրավոր զինծառայողների մայրեր, քույրեր, կանայք, ընտանիքի անդամներ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի եւ մարզի համայնքապետարանների, դրանց ենթակայությամբ գործող կրթամշակութային հաստատությունների, բուժհիմնարկների ներկայացուցիչներ, ուսանողներ, անհատ քաղաքացիներ:

Կանանց տոնի առթիվ ներկաներին շնորհավորել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, ով իր խոսքում նաեւ կարեւորել է մշակույթի ապակենտրոնացմանն ուղղված ՀՀ կառավարության առանցքային ծրագրի գաղափարը:

Ցերեկույթի ընթացքում Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի կողմից Պարոնյանի անվան թատրոնին հանձնվել է շնորհակալագիր, իսկ թատրոնի հանդիսատեսներին՝ ծաղիկներ:

Այնուհետեւ Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասանների ուժերով բեմադրվել է Թամար Հովհաննիսյանի «Վերջին կանգառ» ներկայացումը:

Հասմիկ Շահբազյան

ԳՅՈՒՄՐԻԻ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքը Կանանց տոնի միամսյակի շրջանակներում հյուրընկալել է Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասաններին:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Գյումրիի պետթատրոնի կոլեկտիվը Մարտունի քաղաքի մշակույթի տան բեմում հանդես է եկել «Փարիզը վտանգավոր քաղաք է» կատակերգությամբ:

Միջոցառման մեկնարկին համայնքապետարանի կողմից հրավիրված կին հանդիսատեսները ստացել են ծաղիկներ, իսկ առանձնակի շնորհավորանքներով մեծարվել են հայրենիքի պաշտպանության համար հավերժացած հերոսների ընտանիքների կին ներկայացուցիչները:

Տոնական երեկոյի ընթացքում ելույթ է ունեցել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը՝ կարեւորելով կնոջ կենսական դերը հասարակության մեջ, եւ ներկաներին է փոխանցել համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը:

-Թատերախմբի դերասանները փայլուն խաղով գրավեցին ներկաների սրտերը: Երեկոն եզրափակվեց մեր համերկրացի Արեգ Գալստյանի գեղագիտական կատարումներով:

Միջոցառմանը ներկա էին մանկավարժներ, բուժաշխատողներ, ՀՈԱԿ-ների ներկայացուցիչներ եւ բազմաթիվ հյուրեր, ովքեր տոնական օրվանից բաժանվեցին ջերմ ու հաճելի տպավորություններով,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզի շենքում սկսվել եւ ընթանում են վերանորոգման շինարարական աշխատանքները ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Մարտունու թիվ 4 մանկապարտեզի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 143 միլիոն դրամ, որն ամբողջովին հատկացվել է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է տանիքի, հատակի, սանհանգույցների ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման համակարգերի վերանորոգում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, նոր դռների եւ լուսամուտների մասնակի տեղադրում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 150 օրվա ընթացքում:

Մարտունու թիվ 4 մանկապարտեզը ժամանակավորապես իր գործունեությունը շարունակում է Մարտունու հիվանդանոցի նակին շենքի տարածքում: Մանկապարտեզն այժմ գործում է 3 խմբով, ուր հաճախում են 90 երեխա:

Հաստատության տնօրեն Նաիրա Մարգարյանի հավաստմամբ՝ վերանորոգման ու արդիականացման աշխատանքներից հետո Մարտունու թիվ 4 մանկապարտեզն արդեն կգործի 4 խմբով՝ 120 սանով:

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԾԱԿՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2025 թվականի օգոստոսից մեկնարկել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման շինարարական աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Ծակքարի վարչական ղեկավար Արարատ Ավետիսյանը, Ծակքարի միջնակարգ դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 296 միլիոն դրամ, որն ամբողջովին հատկացվել է պետբյուջեի միջոցներից: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսից եւ կավարտվեն 2026 թվականի մարտ ամսին:

Ծրագրով նախատեսված է շենքի տանիքի, հատակի, սանհանգույցների, էներգամատակարարման համակարգի վերանորոգում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, նոր դռների ու լուսամուտների տեղադրում, ֆուտբոլի խաղադաշտի կառուցում:

Բացի ֆուտբոլի խաղադաշտի կառուցումը՝ 2026 թվականի մարտի 2-ի դրությամբ շինարարական աշխատանքները մոտենում են ավարտին:

Ծրագրի ավարտից հետո Ձորագյուղի հիմնական դպրոցը կապահովվի արդի չոփորոշիչներին համապատասխան բոլոր պայմաններով:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի հիմնական դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքներն արդեն մոտենում են ավարտին:

Ինչպես տեղեկացրեց Ձորագյուղի վարչական ղեկավար Արարատ Սաֆարյանը, դպրոցի շենքը վերանորոգվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ձորագյուղի հիմնական դպրոցի շենքի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 303 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսից եւ ավարտի կհասցվեն 2026 թվականի մարտ ամսին:

Ծրագրով նախատեսված է տանիքի, հատակի, պատերի, սանհանգույցների նորոգում, նոր դռների ու լուսամուտների տեղադրում, այլ աշխատանքներ:

Ծրագրի ավարտից հետո Ձորագյուղի հիմնական դպրոցը կապահովվի արդի չոփորոշիչներին համապատասխան բոլոր պայմաններով:

«Գեղամա աշխարի»

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՔՆԱՊԵՏԱՐԱՆԸ ՏՈՆԱԿԱՆ ԱՆԱԿՆԿԱԼ Է ՄԱՏՈՒՑԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Սեւանի համայքնապետարանը, համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի անմիջական նախաձեռնությամբ, տոնական անակնկալ է մատուցել համայնքի կին աշխատակիցներին:

Մարտի իննի առավոտյան համայնքապետարանը, չխախտելով արդեն ձեւավորված ավանդույթը, պատրաստել էր սպասված քաղցր ու հաճելի անակնկալ Սեւան համայնքի միջին մասնագիտական, հանրակրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մշակութային, առողջապահական հաստատությունների եւ կազմակերպությունների, Սեւանի համայնքապետարանի եւ բնակավայրերի աշխատակազմերի, համայնքում գործող հիմնարկների, կազմակերպությունների, ընկերությունների, կառույցների, մասնաճյուղերի աշխատակից կանանց եւ աղջիկների համար: Սեւանի համայնքապետարանի ներկայացուցիչները, բնակավայրերի վարչական ղեկավարները այցելել են յոթ տասնյակից ավել հաստատություններ եւ կազմակերպություններ՝ տոնական անակնկալի հետ փոխանցելով Սեւան համայնքի ղեկավարի շնորհավորանք-ուղերձը:

-Սեւան համայնքում ջերմ ու ,քաղցրե շնորհավորանքները՝ տորթերի ու շամպայնի տեսքով, ու համայնքի ղեկավարի շնորհավորական ուղերձը գտել են իրենց հասցեատերերին՝ աշխատանքային առավոտը դարձնելով տոնական եւ տարբերվող:

Տոնական անակնկալն սպասված էր, որի մասին բարձրաձայնեցին կանայք՝ իրենց շնորհակալությունը հայտնելով Սեւանի համայնքապետարանի աշխատակազմին ու համայնքի ղեկավարին,- ներկայացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄ

2025 թվականի աշնանից Գավառի գեղարվեստի դպրոցը, ՀՀ նկարիչների միության հետ համատեղ, համայնքում նկարչական սիմպոզիում է կազմակերպում: Սիմպոզիումը կյանքի է կոչվում Գավառի համայնքապետարանի ֆինանսական աջակցությամբ:

2025 թվականի աշնանաը կայացած սիմպոզիումի առաջին փուլում գեղանկարիչների կտավներում պատկերվել են Գավառ համայնքի աշնանային պատկերները, իսկ այժմ ստեղծվում են ձմեռային տեսարանները: Ավագ եւ կրտսեր նկարիների ուշադրության կենտրոնում են նաեւ համայնքի պատմամշակութային կոթողները: Սիմպոզիումին անձամբ մասնակցում է նաեւ ՀՀ Նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը:

Նկարչական սիմպոզիումը գեղարվեստի դպրոցի սաների համար կարեւոր փորձառություն է: Նրանք հնարավորություն ունեն՝ աշխատելու ստեղծագործական ուղի անցած նկարիչների հետ, լսելու նրանց դիտարկումներն ու խորհուրդները:

Սիմպոզիումի յոթ օրերը եզրափակվում են Հայրավանքի եկեղեցու եւ ձյունապատ Սեւանի թեմատիկայով: Այս օրերին ստեղծված նկարները ներկայացվելու են առանձին ցուցահանդեսով: Ցուցադրվելու են ինչպես Նկարիչների միության անդամների, այնպես էլ գեղարվեստի դպրոցի սաների ստեղծագործությունները:

Ալվարդ Մանուկյան

ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն մեկնարկել եւ ընթանում են թիվ 3 մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունու թիվ 3 մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 250 միլիոն 374 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է շենքի սեյսմիկ ուժեղացում, նոր դռների ու լուսամուտների տեղադրում, ծածկի ու տանիքի, խաղահրապարակի, ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, էներգամատակարարման համակարգերի, հատակի կառուցում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, բակային տարածքի կանաչապատում եւ բարեկարգում:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 300 օրացուցային օրերի ընթացքում:

Մարտունու թիվ 3 մանկապարտեզն իր գործունեությունն այժմ շարունակում է Մարտունու բժշկական կենտրոնի նախկին շենքի տարածքում, որտեղ Մարտունու համայնքապետարանի կողմից ստեղծված են նախադպրոցական կրթության կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

5.qxd 14/03/2026 16:49 Page 5

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Արդեն հայտնի են Գեղարքունիքի մարզի պատանիների շախմատի 2026 թվականի մարզային առաջնության հաղթողները, ովքեր Գեղարքունիքի մարզը կներկայացնեն հանրապետական առաջնությունում:

Դպրոցականների շրջանում շախմատ մարզածեւի մասսայական զարգացման, արտադպրոցական եւ արտադասարանական աշխատանքների բարելավման, պատանի շախմատիստների մարզական կատարելագործման, ինչպես նաեւ Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին մարզի մասնակցությունն ապահովելու նպատակով, ամեն տարի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ անցկացվում է Գեղարքունիքի մարզի մինչեւ 8, 10, 12, 14 եւ 16 տարեկան պատանիների շախմատի մարզային առաջնություն:

Առաջնությունն անցկացվել է երկու փուլով՝ համայնքային եւ մարզային: Համայնքային փուլի մրցումներն անցկացվել են 2026 թվականի փետրվարի 18-24-ը՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Սեւանի, Ճամբարակի, Մարտունու, Սարուխանի, Վարդենիսի եւ Վարդենիկի մասնաճյուղերում:

Փետրվարի 28-ին եւ մարտի 7-ին Գավառի Պապին Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում կայացել է առաջնության մարզային փուլը, որին մասնակցել են համայնքային փուլի արդյունքում ձեւավորված թիմերը՝ շուրջ 80 պատանի շախմատիստներով:

Թիմերն ըստ տարիքային խմբերի ձեւավորվել էին հետեւյալ համամասնությամբ՝ մինչեւ 8 տարեկան՝ 1 տղա, մինչեւ 10 տարեկաններ՝ 3 տղա, մինչեւ 12 տարեկաններ՝ 4 տղա, մինչեւ 14 տարեկաններ՝ 2 տղա, մինչեւ 16 տարեկաններ՝ 2 տղա: Ընդ որում՝ մինչ 10 տարեկան պատանիների մրցաշարում մասնակցության իրավունք ունեին առնվազն 3-րդ կարգ ունեցող, մինչ 12, 14 եւ 16 տարեկան պատանիների մրցաշարում՝ առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստները:

Առաջնությունն անցկացվել է ՖԻԴԵ-ի կանոնակարգի դասական շախմատի կանոնների համաձայն, անհատական կարգով: Խաղացողին մեկ խաղափուլում յուրաքանչյուր քայլի համար տրվել է լրացուցիչ 5 վայրկյան:

Մարզային փուլում մինչեւ 8 եւ 16 տարեկանների տարիքային խմբերում մրցումներն անցկացվել են շրջանաձեւ մրցակարգով, իսկ մինչեւ 10, 12 եւ 14 տարեկանների տարիքային խմբերում՝ շվեյցարական մրցակարգով:

Մինչեւ 8 տարեկանների մրցապայքարում 1-ին տեղը գրավել է Արտյոմ Սարգսյանը (Ճամբարակ), 2-րդ հորիզոնականը՝ Ռոբ Անտոնյանը (Մարտունի), իսկ 3-րդ հորիզոնականը՝ Դավիթ Սարիբեկյանը (Մարտունի):

Մինչեւ 10 տարեկանների տարիքային խմբում ուժեղագույնն էր Նարեկ Եղոյանը (Վարդենիկ), 2-րդ տեղում էր Նարեկ Մանուկյանը (Վարդենիկ), իսկ 3-րդ մրցանակային տեղում՝ Ալեքս Մխիթարյանը (Վարդենիս):

Մինչեւ 12 տարեկանների խմբում 1-ին տեղը գրավել է Բաբկեն Մանուկյանը (Գավառ), 2-րդ տեղը՝ Ալեն Գրիգորյանը (Վարդենիկ), իսկ 3-րդ մրցանակային տեղը՝ Լեւոն Զախարյանը (Մարտունի): Այս տարիքային խմբում հաջորդ փուլի մասնակցության իրավունք է ստացել նաեւ Գեւորգ Դադոյանը (Գավառ):

Մինչեւ 14 տարեկանների տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Վաչե Ավդալյանը (Սարուխան), 2-րդ տեղը գրավել է Սերգեյ Սահակյանը (Ճամբարակ), 3-րդ տեղը՝ Արամ Խաչատրյանը (Մարտունի):

Մինչեւ 16 տարեկանների տարիքային խմբում առաջին հորիզոնականը զբաղեցրել է Տիգրան Սարիբեկյանը (Մարտունի), 2-րդ տեղը՝ Լեւոն Վարդանյանը (Սեւան), 3-րդ մրցանակային տեղը՝ Արմեն Ղանադյանը (Ճամբարակ):

Մրցաշարի արդյունքում ձեւավորվել է մարզի հավաքական թիմը, որը Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին կներկայացնի Գեղարքունիքի մարզը:

Առաջնության մրցանակակիրներին Գեղարքունիքի մարզպետի անունից հանձնվել են հավաստագրեր:

Գեղամ Չարվադարյան

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻՆ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը կապիտալ դրամաշնորհներ է հատկացրել Գավառ քաղաքի Գեղարվեստի դպրոցին:

Համայնքապետարանի 2024 եւ 2025 թվականների բյուջեից կապիտալ եւ ընթացիկ դրամաշնորհների տեսքով, 3 միլիոն 895 հազար դրամի չափով, Գավառի գեղարվեստի դպրոցին միջոցներ են տրամադրվել՝ անհրաժեշտ գույք, տեխնիկա եւ աշխատանքային միջոցներ ձեռք բերելու համար:

Գեղարվեստի դպրոցին 2024 թվականին 1 միլիոն 545 հազար դրամ կապիտալ դրամաշնորհ է հատկացվել: Ձեռք է բերվել դյուրակիր համակարգիչ, պրոյեկտոր, պրոյեկտորի էկրան, բարձրախոս, խոսափող, տեսահսկող համակարգ, կարի մեքենա, արդուկ, սառնարան, մասնագիտական գրքեր եւ պարկաթոռ: Իսկ 900 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհով դպրոցը գնել է աթոռներ, ինչպես նաեւ աշխատանքային նպատակներին ծառայող խառնիչ: 2025 թվականի բյուջեից նաեւ 300 հազար դրամ է հատկացվել՝ հատուկ նպատակային նյութերի ձեռք բերման համար:

2025 թվականին կապիտալ դրամաշնորհով, որը կազմել է 700 հազար դրամ, դպրոցը ձեռք է բերել տպագրական մամլիչ եւ ցուցափեղկեր: 600 հազար դրամ արժողությամբ ընթացիկ դրամաշնորհով էլ գնվել են փորագրման գործիքներ, տպագրական ներկ, նկարի շրջանակներ եւ ցուցադրության համար նախատեսված հատուկ լույսեր: 2025 թվականին եւս համայնքի բյուջեից 450 հազար դրամ է տրամադրվել դպրոցին՝ հատուկ նպատակային նյութերի ձեռքբերման համար:

Համայնքապետարանում համոզված են, որ համայնքային ենթակայությամբ գործող կրթական հաստատություններին այսօրինակ աջակցությունները օգնում են՝ աշխատանքները պահանջված չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու համար:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՆՁԱԿՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 14 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղում ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 16 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 196 միլիոն 535 հազար 800 դրամ:

Պետական ներդրումներով իրականացվել է ճանապարհաշինական 2 խոշոր ծրագիր՝ 806 միլիոն 770 հազար դրամ արժեքով, սուբվենցիոն ծրագրերով՝ 12 ծրագիր՝ 366 միլիոն 739 հազար դրամ արժեքով, վերանորոգվել եւ արդիականացվել են գյուղի երկու դպրոցների մարզադահլիճները:

Իրականացված ծրագրերի արդյունքում Գանձակում հիմնանորոգվել է 7015 գծամետր երկարության ներհամայնքային ու միջհամայնքային նշանակության ճանապարհներ, 2 կամուրջ, կառուցվել 3100 մետր երկարության սալիակապատ ու ասֆալտապատ մայթեր, 2066 մետր երկարության ջրահեռացման համակարգ, 7000 մետր արտաքին լուսավորության ցանց, 2500 մետր ոռոգման ջրատար ցանց, 2 խորքային հոր, Գավառ համայնքի բնության ու պատմության հուշարձանների գովազդային լուսանկարներով 1 ավտոսպասարկման կանգառ, 1 մանկական խաղահրապարակ, բարեկարգվել գյուղի կենտրոնական հրապարակը, վերանորոգվել եւ արդիականացվել թիվ 1 եւ թիվ 2 դպրոցների մարզադահլիճները:

Խոսրով Խլղաթյան

ՎԱՐԴԵՆԻԿՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 32 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն եւ պետական ծրագրերով սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 32 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 3 միլիարդ 472 միլիոն 880 հազար դրամ:

Սուբվենցիոն ծրագրերով իրականացված աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 3 միլիարդ 39 միլիոն 711 հազար դրամ, պետական ծրագրերով իրականացված աշխատանքների ընդհանուր գումարը՝ 433 միլիոն 169 հազար դրամ:

Իրականացված աշխատանքների արդյունքում 2018-2025 թվականներին կառուցվել է 9610 մետր ոռոգման, 24 հազար մետր խմելու ջրատար ցանցեր, 2 խորքային հոր, 2849 մետր արտաքին լուսավորության ցանց, Արցախյան պատերազմներում զոհված վարդենիկցիներին նվիրված հուշահամալիր, հիմնանորոգվել 15000 գծամետր երկարության ներհամայնքային ճանապարհ, բազմաբնակարան 4 շենքերի տանիքներ, Վարդենիկի թիվ 1 հիմնական դպրոցի մարզադահլիճը եւ երաժշտական դպրոցը, կապիտալ նորոգման է ենթարկվել մանկապարտեզի շենքը:

Վարդենիկի մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգման եւ գույքի ձեռքբերման ծրագրի արժեքը կազմել է 410 միլիոն դրամ: Արդի չափորոշիչներին համապատասխանող մանկապարտեզի շենքը 150 սաների առջեւ իր դռներն է բացել 2025 թվականի մայիսից:

Մանկապարտեզի շենքը կապիտալ նորոգվել եւ արդիականացվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Խոսրով Խլղաթյան

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԻՆ

Ավարտին են մոտենում Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Կարմիրգյուղ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել էր 2025 թվականի հուլիսին:

Ինչպես տեղեկացրեց Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Գոհար Ենգոյանը, դպրոցի շենքի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 387 միլիոն 845 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներից, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրով նախատեսված է դպրոցի հատակի, պատերի, ջեռուցման, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի, սանհանգույցների, մարզադահլիճի, ճաշարանի դասասենյակների նորոգում, նոր դռների ու պատուհանների տեղադրում, բակային տարածքի ասֆալտապատում, մինի ֆուտբոլի խաղադաշտի կառուցում, այլ աշխատանքներ:

2026 թվականի մարտի իննի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացված են շուրջ 90 տոկոսով: Ծրագիրը նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ապրիլի առաջին կեսի ընթացքում:

5.qxd 14/03/2026 16:49 Page 6

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԼԻԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզում մեկնարկել են «ՀՀ Դպրոցականների բասկետբոլի լիգայի» համայնքային փուլի մրցումները:

«Բասկետբոլի լիգան» անցկացվում է 3 փուլով՝ համայնքային, մարզային եւ եզրափակիչ: Այն անցկացվեում է 2 տարիքային խմբով: 1-ին տարիքային խմբում ընդգրկված են 5-6-րդ, իսկ 2-րդ տարիքային խմբում՝ 7-9-րդ դասարանների աշակերտները: Թիմի կազմում պետք է ընդգրկված լինեն թե՛ տղաներ եւ թե՛ աղջիկներ: Խաղի ընթացքում դաշտում միաժամանակ պետք է գտնվեն 3 տղա եւ 2 աղջիկ կամ 2 տղա եւ 3 աղջիկ: Յուրաքանչյուր խաղին թիմի կազմում կարող են հայտագրվել 9 աշակերտ:

ՀՀ Գեղարքունիքի մարզում մարզական խաղերի համայնքային փուլին հայտագրվել էին 54 հանրակրթական դպրոցների 77 թիմեր: Առաջինը մրցապայքարի մեջ մտան Մարտունու համայնքային փուլին հայտագրված թիմերը: Փետրվարի 26-ին Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի մարզադահլիճում պայքարի մեջ են մտել 1-ին տարիքային խմբում հայտագրված թիմերը: Հետաքրքիր մրցապայքարի արդյունքում հաղթող է ճանաչվել Վերին Գետաշենի Հ. 1 միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ եւ երրորդ տեղերը գրավել են Ծակքարի միջնակարգ եւ Մարտունու Ս. Դարբինյանի անվան Հ? 2 հիմնական դպրոցների թիմերը: Փետրվարի 27-ին հանդիպել են 2-րդ տարիքային խմբի թիմերը: Այստեղ ուժեղագույնը Մարտունու Ս. Դարբինյանի անվան Հ. 2 հիմնական դպրոցի թիմն էր: Երկրորդ հորիզոնականում Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմն էր, իսկ երրորդ հորիզոնականը բաժին է հասել Վերին Գետաշենի Հ. 1 միջնակարգ դպրոցի թիմին:

Փետրվարի 28-ին Ճամբարակի ավագ դպրոցի մարզադահլիճում անցկացվել են Ճամբարակի համայնքային փուլի 1-ին տարիքային խմբի մրցումները: Այս տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Ճամբարակի Հ. 1 հիմնական դպրոցի թիմը: Երկրորդ տեղում Ճամբարակի Հ. 4 միջնակարգ դպրոցի թիմն էր, երրորդում՝ Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տարիքային խմբի թիմերի մրցապայքարը տեղի է ունեցել մարտի 1-ին: Համառ մրցապայքարում հաղթող է ճանաչվել Վահանի միջնակարգ դպրոցի թիմը: Այստեղ 2-րդը Ճամբարակի Հ. 1 հիմնական դպրոցի թիմն էր, իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցրել է Գետիկի միջնակարգ դպրոցի թիմը:

Սեւան համայնքում 1-ին տարիքային խմբի խաղերն անցկացվել է Սեւանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզադահլիճում: 1-ին տեղը գրավել է Սեւանի Մ. Մաշտոցի անվան հիմնական դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Սեւանի թիվ 5 միջնակարգ, 3-րդ տեղը՝ Սեւանի թիվ 3 հիմնական դպրոցների թիմերը:

Երկրորդ տարիքային խմբի մարզային փուլի խաղերը, որին մասնակցում են 7-9-րդ դասարանների աշակերտերից կազմված դպրոցական թիմերը, անցկացվել են Սեւանի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի մարզադահլիճում: Այստեղ էլ կրկին 1-ին տեղում է եղել Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ տեղը գրավել է Վարսերի Ռ.Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը: 3-րդ տեղում է Սեւանի թիվ 5 միջնակարգ դպրոցի թիմը:

Փաստորեն, «Դպրոցականների բասկետբոլի լիգա» խաղերի մարզային փուլին մասնակցելու իրավուն նվաճեցին Սեւանի Մ. Մաշտոցի անվան հիմնական դպրոցի ավագ ու կրտսեր տարիքային խմբերի թիմերը:

Երկու տարիքային խմբերում 1-ից-3-րդ տեղ գրաված թիմերը արժանացել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաստագրերին:

Վարդենիսի թիվ 2 հիմնական դպրոցում մարտի 10-ին եւ 11-ին անցկացվել են ՀՀ Վարչապետի հովանու ներքո կազմակերպվող «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մրցաշարի համայնքային փուլի խաղերը:

5–6-րդ դասարանների խմբում 1-ին տեղը գրավել է Վարդենիսի էդ. Պողոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի թիմը: Երկրորդ եւ երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Ծովակի եւ Ակունքի միջնակարգ դպրոցների թիմերը:

7–9-րդ դասարանների խմբում առաջին տեղը նույնպես գրավել է Վարդենիսի էդ. Պողոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ եւ 3-րդ մրցանակային տեղերը զբաղեցրել են Վարդենիսի թիվ 3 հիմնական եւ Գեղամասարի միջնակարգ դպրոցների թիմերը:

Այսպիսով, «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի մարզային փուլում Վարդենիս համայնքից մասնակցության իրավունք են ձեռք բերել Վարդենիսի էդ. Պողոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի ավագ ու կրտսեր տարիքի թիմերը:

Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից շնորհվել են հավաստագրեր:

Մրցանակային տեղեր գրաված թիմերին ԿԳՄՍ նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր:

Համայնքային փուլի յուրաքանչյուր տարիքային խմբում առաջին տեղ գրաված թիմերը համայնքը կներկայացնեն մարզային փուլի մրցումներում:

Գեղամ Չարվադարյան

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ-2026» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում անցկացվել է «Գեղարքունյաց ձմեռ-2026» մարզամշակույթային միջոցառումը՝ «Լինենք առողջ» խորագրով:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառմանը ներկա են եղել Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, բնակավայրերի վարչական ղեկավարները եւ բազմաթիվ բնակիչներ, Վարդենիսի հանրակրթական դպրոցների, թիվ 1 քաղաքային մարզադպրոցի, Ռաֆիկ Եսայանի անվան մարզադպրոցի, շախմատի ակադեմիայի սաները եւ մարզասերները: Մարզամշակութային օրվա մեկնարկը տրվել է Վարդենիսի շախմատի ակադեմիայում, որտեղ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ողջունել է շախմատիստներին եւ կատարել առաջին խորհրդանշական քայլը:

Այնուհետ Վարդենիսի Ռաֆիկ Եսայանի անվան մարզադպրոցի մարզադաշտում բազմամարդ միջոցառումը սկսվել է Վարդենիսի թիվ 1 ՄԵԴ-ի երգչախմբի կողմից Հայաստանի Հանրապետության օրհներգի կենդանի կատարմամբ, բարձրացվել է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը: Ողջույնի խոսքով հանդես է եկել Համայնքի ղեկավարը: Մասնակիցներն իրենց ուժերն են չափել շախմատ, կշռաքարերի բարձրացում, պարկացատկ, պարանի ձգում, մինի ֆուտբոլ, ազգային կոխ,ձնագնդիով կամ թենիսի գնդակով հարված նշանակետին մարձախաղաձեւերում:

1-ին, 2-րդ, 3-րդ տեղ գրաված մասնակիցները պարգեւատրվել են Վարդենիս համայնքի ղեկավարի կողմից պատվոգրերով եւ գեղեցիկ հուշանվերներով, իսկ թիմային մարզախաղերում 1-ին տեղ գրաված թիմերը ստացել են գավաթներ:

Միջոցառման ավարտին մարզադպրոցների տնօրեններ Վարդան Դավթյանը եւ Արսեն Մաթեւոսյանը համայնքի ղեկավարի կողմից պարգեւատրվել են շնորհակալագրերով եւ հուշանվերներով:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՎԱԼԵՐԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում անցկացվել է Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի երիտասարդների եւ կրտսեր տարիքի պատանիների առաջնություն, որը նվիրվել է ՀՀ վաստակավոր մարզիչ Վալերի Մնացականյանի հիշատակին:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեւորգ Սարգսյանը, հուշամրցաշարին մասնակցել են հանրապետության տարբեր համայնքներից ժամանած 190 բռնցքամարտիկներ:

Միաժամանակ առաջնությունն անցկացվել է նաեւ մարզում բռնցքամարտի մասսայականացման, ուժեղագույն պատանի բռնցքամարտիկներ ի հայտ բերելու եւ մարզի հավաքական թիմը համալրելու նպատակով:

-ՀՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող, բռնցքամարտի բազմավաստակ մարզիչ, Սեւան քաղաքում բռնցքամարտի զարգացման գործում լուրջ ավանդ ունեցած Վալերի Մնացականյանը երկար տարիներ մարզել է բազմաթիվ երիտասարդների, ովքեր մեծ հաջողությունների են հասել եւ արժանացել աշխարհի, եվրոպայի, հանրապետական ու մարզային բարձր տիտղոսների: Նրա սաներն այսօր դարձել են արդեն մարզիչներ, սպորտի վարպետներ, ովքեր շարունակում են Վալերի Մնացականյանի ոգով կրթել նոր բռնցքամարտիկների, ովքեր դեռ նորանոր բարձունքների են հասնելու, նրանց շնորհիվ աշխարհի ու եվրոպական ռինգերում ծածանվելու է Հայոց եռագույնը,-նշեց Գեւորգ Սարգսյանը:

Առաջնության հաղթողները պարգեւատրվել են մեդալներով, պատվոգրերով, նվերներով եւ գավաթներով, իսկ մարզիչները՝ շնորհակալագրերով:

Մրցանակները հաղթողներին են հանձնել Վալերի Մնացականյանի որդին՝ Ալիկ Մնացականյանը, եւ թոռները:

«Գեղամա աշխարհ»

ԾԱՂԿԱՇԵՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 5 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծաղկաշեն գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 5 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 394 միլիոն 999 հազար դրամ:

Ծրագրերից 3-ը սուբվենցիոն են՝ 28 միլիոն 439 հազար դրամ ընդհանուր արժեքով, 1-ը՝ պետական՝ 166 միլիոն 560 հազար դրամ արժեքով եւ 1-ը՝ համայնքային՝ 200 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Ծաղկաշենում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 1500 մետր արտաքին լուսավորության ցանց, Գավառի բնության եւ պատմության հուշարձանների գովազդային վահանակներ կրող ավտոսպասարկման կանգառ, մանկական խաղահրապարակ, 10600 մետր խմելու ջրատարի արտաքին ու ներքին ցանցեր, քլորակայան, աղբյուրակապեր, հիմնանորոգվել խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարը:

Ծաղկաշենի խմելու ջրամատակարարման համակարգն արդիականացվել է «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» միջոցներով, 166 միլիոն 560 հազար դրամ արժեքով, 2022-2024 թվականների ընթացքում:

2025 թվականից Ծաղկաշեն գյուղում ընթանում են վարչական ղեկավարի գրասենյակի եւ երեխաների ու երիտասարդների համար ժամանցի կազմակերպման նոր շենքի կառուցման աշխատանքները, 200 միլիոն դրամ արժեքով, որն ամբողջությամբ հատկացվում է Գավառ համայնքի 2025 եւ 2026 թվականների բյուջեներից: Շենքը միաժամանակ ունենալու է մանկապարտեզի կազմակերպման տարածք:

Խոսրով Խլղաթյան

5.qxd 14/03/2026 16:49 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Գործն ավարտվում է նրանով, որ կենտրոնի ստիպմամբ, անձրեւառատ եղանակին հովիվը խուզում է ամբողջ ոչխարը՝ օրվա ընթացքում քնելով ընդամենը 4-5 ժամ: Մթերման խնդիրները հարթվում են՝ առաջ գնալով «յոթ մղոնանոց քայլերով», նախագահը կուսակցական նկատողություն է ստանում, իսկ ոչխարի «մատղաշը ջարդվում է»:

Մի երեկո, հունձից հետո, հովիվների հանրապետություն մուտք է գործում չորս ոչխար՝ երկուսը սեւ, երկուսը՝ սպիտակ: Հովիվները կարող էին պահել ոչխարներին, սրանք գառներ կտային ոչխարների տերն էլ կօրհներ ու կգովեր հովիվներին: Բայց արի ու տես, որ «գիշերվա հետ էդ անտեր գողության միտքն ինքն իրեն է գալիս» :

Հովիվները Ռեւազի ոչխարները մորթելը հանցանք չեն համարում, քանի որ Ռեւազն իրենց Ռեւազն է, ուրեմն ոչխարներն էլ իրենց ոչխարներն են: Գյուղում էլ առաջին անգամը չէ, որ նման դեպք է պատահում. հարեւան գյուղը Անտառամեջից ձիերի մի ողջ երամակ է գողացել եւ աշխատեցրել օրերով, հետո էլ զանգով լուր է ուղարկել, որ ձիերի աշխատանքը գովելի է: Պատահել է՝ Պավլեին են գողացել, յոթ օր չի երեւացել, «լսել ենք՝ լավ հնձվոր ես» եւ տարել են հունձ անելու: «Առաջին օրը չափ էինք մտնում, հետո հանգիստ աշխատեցինք: Չափ մտնելով հունձ չի լինում,-հիշում է Պավլեն ու քաղցրությամբ է հիշում,-լավ տղերք էին»: Նման դեպքերը օրինաչափ են եւ բնորոշ են այս մարդկանց:

Հովիվներից ոչ ոք չի հերքում, իհարկե, որ ոչխարները մորթել են, քսան-քսանմեկ մարդով միսը կերել, «փառավորապես կշտացել», որ չեն էլ հիշում, թե քանիսն են մորթել, քանիսը՝ թողել, սակայն այդ մսից կերել է նաեւ ոչխարների տերը, հետո էլ ոչխարների դիմաց գումար է վերցրել եւ չի բողոքում՝ «չորս ոչխարի պատճառով հո քսանմեկ մարդու չէի՞ն պատժելու»: Հատկապես վերջին միտքը գյուղի բարոյականության, նրա ներդաշնակության, մարդուն եւ նրա հետ հարաբերություններն արժեւորելու տրամաբանության մեջ է:

Ռեւազի կնոջ հորդորով ոչխարների գործը քննող լեյտենանտը հովիվների աչքում անլուրջ մարդու է նման, որը լինելով «տարիքն առած մարդ, երեխա բաների հետեւից է ընկել»: Ինքը՝ լեյտենանտը, համոզված է՝ օրենք է, բոլորը կգնան, օրենքը կմնա:

Երեխա բաների հետեւից ընկած չէ Իշխանը. փորձում է իրենից քսան անգամ ծանր եզը միայնակ շրջել, իսկ նրան քննելու եկած լեյտենանտը հովվին օգնելու համար պետք է համապատասխան կարգադրություն ունենա ընկեր պետի կողմից: Ավելորդ է նշելը, որ հովիվների հանրապետության քաղաքացիները միայն հովիվներ չեն՝ ընտանիքի հայրեր են, հնձվորներ են, ակումբավար ու ֆերմայի վարիչ, ամենքն իրենց չափով Հովհ. Թումանյան գիտեն, իրենք սարվոր մարդիկ, բայց քարտեզից գլուխ են հանում, եւ տեղյակ են, որ Հալեպում տաճիկը հայհոյել է իրենց ազգը: Այսքանից հետո նրանց առաջ լեյտենանտի դրությունը ամոթալի է. «Ընկեր լեյտենանտ չի մնացել, մնացել է մի մարդ, որը գետինն է մտնում... Որի տանը շնորհքով դարսված են գրքերը, մի հինգ հարյուր հատ եւ այդ մարդը կյանքում գիրք չի բացել: Հիմար գողություններ, հիմար հետաքննություն... Թո՜ւ, սրիկա... Փոխիր գործդ, փոխիր... Հե՛, հիսուն տարեկանում գործը չեն փոխում»:

Մեկ անգամ չէ, որ սովետական կարգերին անդրադառնալիս Հ. Մաթեւոսյանը նկատել է պետական մի շարք գործերի եւ որոշ օրենքների անօգուտ լինելը: Խորը դիտարկումներ են արված նաեւ այս վիպակում: Կենտրոնը որոշում է մարդու փոխարեն, եւ չի արժեւորում նրա կատարած աշխատանքը: Կենտրոնին հետաքրքրում է՝ նախատեսված ժամանակում պլանավորված քանակով արդյունքներ ստացվել են արդյոք. «...Նրանք գերակա խնդիր են դարձնում պարտականությունների կատարումը եւ ոչ աշխատանքը, հասարակության մեջ մարդու գրաված դիրքը եւ ոչ անհատին», - նկատում է գրականագետ Վ. Գրիգորյանը:

Լեյտենանտի վրա մեծ է ընկեր պետի ճնշումը. Արշոն տեղ է հասցրել՝ իբրեւ հովիվները կաշառել են Հակոբյանին, սարերում էլ միասին եզ են մորթել: Լեյտենանտը գիտակցում է, որ պատահածը գյուղական սովորական դիպված է, ոչ թե հանցագործություն: Իր որոնումներն էլ ապարդյուն են, քանի որ հանցակազմ չկա, սակայն ընկեր մայորն ասել է. «Լեյտենանտ Հակոբյան, ապացուցիր, որ լեյտենանտ ես, գնա՛»:

Երբ գործը բարդանում է, հովիվները նախ ինքնօգնության ճանապարհով են ընթանում, որպեսզի հնարավորինս քիչ վնասեն իրենց ընկերներին: Բացի այդ, ինչպես սխալվել են, այնպես էլ պիտի հարթեն իրենց սխալը՝ փորձելով նախ Զավենին ու Պավլեին հեռու պահել պատասխանատվությունից՝ հանցանքը փոխադրելով մյուսների ուսերին? Նրանք մանկահասակ երեխաներ ունեն:

Անկախ գործված հանցանքից եւ դրա շուրջ բազմաթիվ անհամաձայնութ-յուններից, գյուղում աշխատանքի եռուն ժամանակն է: Գործը մարդու համար է, մարդը՝ գործի: Քաղաքից եկածներն ամեն օր չէ, որ նման բան են տեսնում. «Այդ պահը ձեւակերպվեց ու մնաց լեյտենանտի հիշողության մեջ. Բեռան տակից կատակ էր անում», - ասվում է հարցաքննության գնացած լեյտենանտի մասին: Զավենի բեռը թեթեւներից չէր. մի պարկ լիքը աղ՝ ոչխարի համար, որը լեյտենանտի օգնությամբ դժվարությամբ դնում է թիկունքին, եւ ճոճվելով գնում: Գյուղացու բեռը առհասարակ թեթեւներից չէ: Սակայն գյուղացիները աշխատանքի մարդիկ են, գյուղի մարդիկ են, հավասար մարդիկ են, բեռն էլ նրանց բեռն է: Սա անզեն աչքով անգամ տեսնելու բան է: Ռեւազն էլ նրանց Ռեւազն է, ուրեմն Ռեւազի ոչխարներն էլ նրանց ոչխարներն են: Այս մեկը, սակայն, աչքով տեսնելու բան չէ, մտքով ընմբռնելու բան էլ չէ: Այս մեկը ապրելու բան է, ամեն օրվա միջով անցկացնելու, աշխատանքով ամրապնդելու, կենսափորձով գիտակցելու բան է: Երբ դու իրենց գյուղացի Արշոն ես, սակայն օրենքի մարդ ես եւ ոչ թե գյուղի, ուրեմն «ավելորդը դու ես, դու լավ մարդ չես»: «Արշոն այստեղ ինչացո՞ւ է, քննիչն այստեղ ինչացո՞ւ է. դու ես՝ քո աշխատանքը, քո սարերը, քո Ռեւազը, քո ոչխարը, քո Գետամեջը»:

Խոսքն այստեղ ոչ թե Անտառամեջը կամ Գետամեջը որպես մասնավոր սեփականություն դիտարկելու մասին է, այլ այդ շրջանակներում վաղուց ի վեր ձեւավորված անձնային եւ համագյուղացիական որակների նկատմամբ անդավաճան մնալու: Այս մարդիկ օտարված չեն միմյանցից, եւ նրանցում գերակա նշանակություն ունեն մարդը եւ անձնային հարաբերությունները, իսկ օրենքի միջամտությունը, ինչին հովիվները ամեն գնով փորձում են խոչընդոտել, պառակտում է մտցնում ավանդական որակներ ունեցող փոխհարաբերությունների մեջ:

Լեյտենանտը մեկն է նրանցից, ովքեր կատարում են օրենքի թելադրանքը եւ նույնքան խոցելի է, որքան ներքեւներին սխալ հրահանգներ ուղարկող կենտրոնը: Նրա համեմատությամբ Անտառամեջի «մեղադրյալ» հովիվների դիրքերն անգամ ավելի ամուր են եւ անսասան, նրանց միտքը սուր է եւ ոչնչացնող. «Գիտեին, որ քննիչը քաղցած է, քաղցից ուղղակի սատկում է, բայց չպահեցին հացի, որպեսզի անհարմար չզգա: Նա գյուղից փախավ թաքուն»:

Հեղինակի՝ գյուղի եւ գյուղացու հոգեբանությանը մոտ կանգնած լինելը, ստեղծում է այդ միջավայրի եւ նրա մարդկանց գործունեության, իրավունքների եւ պարտականությունների ամբողջական պատկերը: Այդ ամենը արվում է գեղարվեստական երեւակայությամբ եւ չափավոր, գրավիչ հումորով:

Գյուղը չի ցանկանում արտաքին աշխարհից որեւէ մեկին մասնակից դարձնել իր դարավոր ապրելակերպին, բնականոն ընթացքին, բարոյական նորմերին եւ չի սխալվում. «Հաշվի չառան, թե խուզի ժամանակն է, տղաներին վերցրին կալանքի»: Եվ դարձյալ օգնության փորձը ներսում է ձեւավորվում. տնտեսության նախագահը շտապում է քաղաք՝ տղաներին ազատելու ազնիվ հույսով, իսկ նրան ընդունած գեներալը խոսում է ամեն ինչից՝ վարունգ գողանալուց, ջրվեժի տակ լողալուց, իր շալվարից, որ Պավլեին է տվել եւ այն բանից, որ վարազը կովի քեռին է՝ մակերեսային կերպով միայն հիշելով, որ ոչխար են գողացել: Ի վերջո, նախագահը խորը տհաճություն է ապրում պատահածի համար՝ հոգու խորքում նույնիսկ հաշտվելով այն մտքի հետ, որ տղաներին մի քանի տարով կբանտարկեն եւ հեռանում:

Բանտարկությունից հետո Պավլեն մի քիչ փոխվեց: Որոշ ժամանակ անց ընտանիքը տեղափոխեց քաղաք, տուն ու տեղ դրեց եւ կարտոֆիլի պարկի կողքին դրվեց դաշնամուրը, երաժշտական լսողությամբ դուստրը սկսեց պարապել նոր գործիքով. «Լավը միայն այդ չէ. ոչխարների դեպքից հետո, ասում են, Անտառամեջ ոչ մի գողություն չի հայտնաբերվել: Լինելը՝ գուցե եղել է, բայց չի հայտնաբերվել, այնպես որ՝ չի եղել»:

Գյուղական այս ներփակ աշխարհում մարդիկ կապված են միմյանց օրգանական կապերով, այդ իսկ պատճառով նրանք սրտացավ են միմյանց նկատմամբ: Ռեւազն ու Պավլեն ամբողջ գյուղի Ռեւազն ու Պավլեն են եւ նրանց հանցանքը բոլորի հանցանքն ու հոգսն է եւ այս մարդիկ վարժված չեն այլ հարաբերությունների:

Մի ժամանակ սերտ եւ սիրառատ են եղել հարաբերությունները նաեւ «Ալխոն» («Բեռնաձիեր») վիպակի հերոսների միջեւ, սակայն այստեղ էլ դրանք ստացել են նոր ձեւ ու բովանդակություն: Վիպակում, երիտասարդների քաղաք տեղափոխվելու հետեւանքով, գյուղն աստիճանաբար դատարկվում է, արժեզրկվում են երբեմնի ավանդական հայացքները, սովորական են դառնում նոր հարաբերությունները:

Գյուղը բաղկացած է տարբեր ինքնաշեն ինստիտուտներից, որոնցից մեկն էլ վարքուբարքի ինստիտուտն է: Եթե կին ես, մայր ես, ուրեմն քո չափով պիտի վարես տնտեսության քո բաժինը՝ եփես, մաքրես, լվանաս, հնձվորին ճաշ տանես, առաքինության օրինակ լինես զավակներիդ եւ շրջապատող աշխարհի համար... Եթե տղամարդ ես, ուրեմն դու էլ քո անելիքներն ունես՝ պետք է վարես, ցանես, հնձես, խոտը տեղափոխես գյուղ... եւ այդպես տարին բոլոր: Այս ամենը օրինաչափ է, ենթարկվում է գյուղական մտածողության եւ նրա ակտիվ կացութաձեւերի բոլոր կանոններին:

Տարիքն առած Գիքորը մեկն է այն գյուղացիներից, որոնք ապրում են այդ շրջապտույտի մեջ: Նա հմուտ է տնտեսությունը վարելու գործում: Ուստի բնական է, որ հասուն բերքով ծանրաբեռնված տանձենուն նայելով զայրանում է Անդրոյի վրա. «Քո տո՛ւնը շինվի, ձեռիցդ հազար է թռչում, դու օրը ցերեկով քուն ես մտնում»: Նա զայրույթով ու մի քիչ էլ տարակուսանքով է լցված նաեւ գյուղի հովեկների նկատմամբ: Նրանցից մեկը մի ծավալուն կին է, մյուսները՝ դեռատի աղջիկներ: Գիքորի համար այդ «վիթխարի» կինն ու դեռատիները գուցե նաեւ առաջին օրինակներն են, որոնք գյուղում գտնվելով, չեն աշխատում: Սա ընդդիմության մի դրսեւորում է հիշեցնում ողջ գյուղի նկատմամբ: «Հասած աղջիկ եք, - չդիմանալով կանչում է Գիքորը, - մոռը հոտում է, մոռն ի՞նչ է, գնացեք քաղեք, ձմեռը մուրաբա կունենանք: Ձեր հերը կուրախանա»: Սակայն «վիթխարու» անտարբերությունից, նրա անշարժությունից երեւում է, որ նրանք բնավ էլ մոռ հավաքելու կամ ընտանիքի հոր մուրաբայի հոգսը հոգալու նպատակ չունեն. նրանք եկել են գյուղ, որպեսզի հանգստանան: Մինչդեռ, օրնիբուն աշխատող գյուղացին չի կարող ըմբռել, թե սառնորակ գետն ու կանաչապատ ափերը հանգստի գոտիներ են: «Վիթխարին նմանատիպ այլ կերպարների նման ընդգծում է միջավայրին ու բնությանը եւ դրանց գեղարվեստական իրացում՝ մաթեւոսյանական աշխարհին օտար մարմինների առկայությունը», - նշում է Վ. Գրիգորյանը:

Գիքորն, ինչպես ասացինք, ծերունազարդ տարիքի մարդ է, սակայն նրա տան գործը նրա գործն է: Անդրոյի Ալխոն, որ իր ողջ կյանքը անցկացրել է բեռնաձիու անասելի ծանր բեռը թիկունքին, նույնպես վաղուց երիտասարդ չէ: Ուստի Գիքորի ու Ալխո ձիու ուղեւորությունը դեպի գյուղաքաղաք Ղազախ, առավելապես փորձության եւ ոչ թե սովորական աշխատանքի է նման:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արդեն մի քանի օր է, ինչ Գեղարքունիքի մարզի Մարտունիք աղաքում մեկնարկել եւ ընթանում են թիվ 2 մանկապարտեզի կապիտալ նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աաշխատակազմից, Մարտունու թիվ 2 մանկապարտեզի կապիտալ նորոգման աշխատանքներն ընթանում են ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, 231 միլիոն 178 հազար դրամ պայմանագրային արժեքով, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է շենքի սեյսմիկ ամրացում, նոր տանիքի, ջեռուցման համակարգի,

պարսպի, խաղահրապարակի կառուցում, դռների եւ լուսամուտների տեղադրում, հատակի, սանհանգույցների, ջրամատակարարման ու էներգամատակարարման համակարգերի նորացում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, ջերմամեկուսացում, բակային տարածքի բարեկարգում, այլ աշխատանքներ:

Շինարարությունը նախատեսվում է ավարտի հասցնել 300 օրացուցային օրվաընթացքում:

Մանկապարտեզն իր գործունեությունն այժմ իրականացնում է Մարտունու բժշկական կենտրոնի նախկին շենքի տարածքում, որտեղ համայնքապետարանի միջոցներով նախադպրոցական կրթության կազմակերպման համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները:

«Գեղամա աշխարհ»սս

5.qxd 14/03/2026 16:49 Page 8

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՉԱՐԵՆՑԸ

ԴՈՖԻՆԸ ՆԱԻՐԱԿԱՆ
/Աղասի Խանջյանին/

/սկիզբը՝ էջ 1-ում/

Որպես ջրհորն ընկած աստեղային մի ջահ՝
Ընկա՛վ, պոկվե՛ց հանկարծ լուրթ եթերից,
Թե դոֆինյան քո դե՞մքը, թե անունը՝ Խանջ-յա՛ն...
Եվ ես հիշում եմ մեր այն մտերիմ,
Եվ իրոնիկ զրո՞ւյցը այնքան թովիչ,
Երբ կոչեցի ես քեզ Նաիրական Դոֆին:

ՍՈՆԵՏ ԵՐՐՈՐԴ
«Մայրը»

Նա մազերն էր փետում, եւ ճանգռելով երեսը՝
Իր զավակի մեռած ձեռքին կառչած,
Թառանչո՛ւմ էր, կանչո՛ւմ աղերսածայն.
«Ո՞վ քեզ այսպես արեց, ո՞վ, Աղասի՞...
Դու համբերո՛ղ էիր ու լավասիրտ,
Ո՞ր սեւավոր հոգին, կամ ձեռքը չար,
Քո սեւավոր մահվան դարձավ պատճառ, –
Չէ՞ որ սիրում էիր դու քո հարսին...»:
Այսպես ողբում էր մայրն իր զավակին,
Որը թվում էր արդեն մի հուշարձան քարե,
Որին ո՛ւխտ էր եկել մի գաղթական կին...
Եվ, բիբերում պահած անհաշվելի դարեր,
Քարե Չարենցն էր լուռ լսում նրան՝
Խոսքի վերջի՛ն Դոֆի՛նը նայիրյան:

ՍՈՆԵՏ ՉՈՐՐՈՐԴ

«Շրթունքները»

Ալեբաստրե, ողորկ շրթունքների վրա
Ինչ-որ խորհուրդ կար հին՝ մահվան գրով գրված, –
Եվ շրթունքները պիրկ իրար փարված
Կնքել էին գաղտնիքն այդ հուրհրան: –
Շամիրա՞մն էր արդյոք հրապուրել նրան,
Թե՞ Նվարդի սիրով ընդմիշտ գերված,
Նա ընդունել էր մահ, – իբրեւ հարված
Իր ոսոխի կողին, որպես հնում Արան...
Մահվան նիշով կնքված շրթունքների վրա,
Ի՜նչ խորհուրդ էր արդյոք նա զմռսել,
Վերջին ճիգով սեղմել էր երբ շրթունքներն իրար...
Ստելությո՞ւն արդյոք, թե՞ ահռելի մի սեր
Հար հրկիզել էին շրթունքներն անբառ –
Երբ նա, – խոնարհ, – ընտրել էր մահու ճամփան:

ՍՈՆԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ
«Լեգենդը»

Ինչպե՞ս կարող էիր հրապուրել նրան,
Երբ մանկության օրից, գիտեր անգիր արած,
Իր հայրենի բերդի պարիսպներին գրած,
Քո մշտունայն լեգենդը, Շամիրա՞մ:
Մանկությունից արդեն այդ գանգրահեր Արան,
Անագորույն իր սերը՝ որպես նիզակ սրած,
Ընդմիշտ ուխտել էր իր անդավաճան սիրած
Նայիրուհուն՝ սրտով իր հուրհրան...
Անգամ ձեռքով մենք մեր եթե թաղենք այսօր,
Խե՛ղճ, գողունի՛ երթով եղերական իր դին,
Նա կհառնի՞ կրկին՝ իր պարտությամբ հզոր.
Հազարամյա, անհայտ ուղիներով խրթին
Իբրե զրահ՝ մահվան զգեստ հագած, –
Կբարձրանա զրո՞ւյցն այդ ավանդական:

ՍՈՆԵՏ ՎԵՑԵՐՈՐԴ
«Մահ լեգենդին»

Եվ նայելով անկիրք շրթունքներին նրա՝
Իմ նայիրյան ոգին աղերսակոծ ոռնա՛ց, –
«Քանի՞երորդ անգամն է, որ պարտությամբ հառնած՝
Գերեզմա՛ն ես իջնում, մանո՞ւկ Արա.
Տրված սիրով անմեռ իր Նվարդին. – Առ նա՞
Խնկարկելով արյո՞ւնն իր հուրհրան,
Քանի՞երորդ անգամ, օ՜, Շամիրամ,
Զոհվի արքան մանուկ, որ դո՛ւ զրույց դառնաս...
Արդեն հոգնե՛լ ենք մենք այս անիմաստ բախտից,
Դու մինչեւ ե՞րբ, Արա՞, մանուկ մնաս,
Եվ մինչեւ ե՞րբ, – այսպես, – մահո՞վ հաղթես...
Լավ է նաշից քո էլ չբարձրանա՞ս,
Եվ պայքարի ելնեն առաջնորդներ պարթեւ,
Որ մեռնելով պարտվե՞ն, կամ ապրելով հաղթե՞ն...»:

ՍՈՆԵՏ ՅՈԹԵՐՈՐԴ ԵՎ ՎԵՐՋԻՆ
«Իմաստություն»

Որպես վսեմ մարդո՞ւ, բարեկամի՞
Մահվան մորմոք, կամ սեւ, զարհուրելի անկում,-
Չե՛մ մոռանա երբեք իմ երկրային կյանքում,
Քո կերպարանքը՝ ես կենդանի եմ քանի.
Եվ լեգենդի նման անհիրակա՞ն, կամ մի
Առասպելի նման ժողովրդի հոգում,
Դու տարիներ՛ կապրես, իբրեւ մորմոք թաքուն,
Դարձած հեռո՛ւ, անցա՛ծ նայիրյան միֆ...
Ի՜նչ կա սակայն այստեղ, օ՜, Աղասի՞, դյութիչ,
Ժողովրդի հոգում չի՞ հուրհրում արդյոք
Դեռ դրախտի լեգե՞նդը հրապուրիչ. –
Իմաստո՛ւն է գուցե քառուղիներ հարթող
Հայրենաբաղձ կորո՞տը այն լրջամիտ,
Որ բարձրանում է արդ՝ իբրեւ կյանքով հաղթո՞ղ...

1936, 9-11 հուլիսի

«ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ»-Ը՝ ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի համայնքային գրադարանում հայտարարված «Թումանյանական շաբաթն» անցել է բազմաբովանդակ միջոցառումներով:

Ինչպես տեղեկացրեց Գավառի համայնքային գրադարանի տնօրեն Սիրանուշ Խանդանյանը, հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանին նվիրված շաբաթը մեկնարկել է Գավառի պետական բժշկական քոլեջի ուսանողների եւ դասախոսների այցով եւ համատեղ կազմակերպված Թումանյանի ծննդյան 157-ամյակին նվիրված գրական ցերեկույթով ու գրքերի փոխադարձ նվիրատվությամբ:

Շաբաթվա ընթացքում գրադարանում հյուրընկալվել են նաեւ Գավառի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4 դպրոցի աշակերտները, ովքեր օրը նշանավորվել են թումանյանական ընթերցումներով:

«Մայրենի լեզվի օրվա» առթիվ էլ կազմակերպված խաղ-վիկտորինային մասնակցել են Գավառի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 եւ Գանձակի թիվ 1 դպրոցի աշակերտները:

Թեմատիկ միջոցառումներով հանդես են եկել նաեւ Գանձակի թիվ 1 եւ Գավառի թիվ 4 դպրոցների աշակերտները:

Գրադարան են այցելել նաեւ Գավառ քաղաքի մանկապարտեզների սաները, որոնց համար կազմակերպվել են Թումանյանական հեքիաթների ընթերցումներ ու բեմադրություններ:

Մայրենի լեզվին, գրքատոնին եւ Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված շաբաթն ամփոփվել է «Մայրենիի անաղարտության պահպանումը յուրաքանչյուրի պարտքն է» խորագիրը կրող միջոցառմամբ: Այն ներկայացրել են Գավառի պետական բժշկական քոլեջի ուսանողները:

-Հովհաննես Թումանյանին ու Մայրենի լեզվին նվիրված միջոցառումները եւս մեկ անգամ փաստեցին, որ մեր կրթական ու նախակրթական հաստատություններում մեծ սեր ու հետաքրքրվածություն կա Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների, ոսկեղենիկ հայերենով մեզ հասած գրական այլ ստեղծագործությունների նկատմամբ,-ներկայացրեց գրադարանի տնօրենը:

«Գեղամա աշխարհ»

«ՍՏՎԵՐՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ»-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ

«Գավառի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի եւ «ԱՐԱՐ» հայ ազգային արվեստի պահպանման կենտրոնի «Ստվերների թատրոն»-ը հրավիրվել է Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարան եւ Գեղարքունիքի երկրագիտական թանգարան:

Ստվերախաղն անցել է ջերմ եւ աշխույժ մթնոլորտում: Թատրոնի սաներն հանդես են եկել Հովհաննես Թումանյանի հեքիաթների եւ առակների ներկայացմամբ: Հանդիսատեսները եղել են Գավառ համայնքի յոթ հանրակրթական դպրոցների աշակերտներն ու ուսուցիչները:

Թատրոնի սաներն ու հանդիսատեսները միմյանցից բաժանվել են գեղեցիկ տպավորություններով: Գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը եւ թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանը բարձր են գնահատել իր տեսակի մեջ յուրօրինակ եւ մեր օրերում լայն տարածում չունեցող ստվերախաղը՝ արժեւորելով նաեւ կենտրոնների ղեկավարների եւ խմբակավարի ջանադիր աշխատանքը թատրոնի կայացման գործում: Թատրոնի սաներն իրենց ստեղծած առակների ժողովածուն նվիրել են դպրոցների գրադարաններին:

Ալվարդ Մանուկյան

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՍԵՎԱՆԻ ԹԻՎ 3 «ՀԵՔԻԱԹ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի թիվ 3 «Հեքիաթ» մանկապարտեզում սկսվել եւ ընթանում են վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, Սեւանի «Հեքիաթ» մանկապարտեզի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 162 միլիոն 960 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրով նախատեսվում է հատակի, պատերի, սանհանգույցների, ջեռուցման, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի վերանորոգում, նոր դռների եւ լուսամուտների տեղադրում, այլ աշխատանքներ:

Պետական ֆինանսավորմամբ իրականացվող հիմնանորոգումներին զուգահեռ Սեւան համայնքն էլ հայտարարել է մրցույթ «Հեքիաթ» մանկապարտեզի բակային տարածքի բարեկարգման եւ կահավորման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 150 օրացուցային օրվա ընթացքում:

«Հեքիաթ» մանկապարտեզը գործում է 6 խմբով:

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 13. 03. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: